

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

Գ. Պ. ԱՆՃԵԼՅԱՆ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՃՇՏՈՒՄ

Տաղանդավոր վիպասան և հրապարակախոս Հակոբ Մելիք-Հակոբյանը իր բազմավաստակ գործունեությունը ընթացքում օգտագործել է մի շարք կեղծանուններ (Բաֆֆի, Մելիքզադե, Փավստոս)։

Ինչպես պարզվում է մի շարք հոդվածներից, Մելիք-Հակոբյանը օգտագործել է նաև Աճաճուն ծածկանունը։ Կենսագրությունից հայտնի է, որ 1875—1877 թթ. ուսուցչի պաշտոնով նա աշխատել է Պարսկաստանի Թավրիզ քաղաքում։ «Մշակի» 1876 թ. № 5-ում Աճաճուն ստորագրությունը տպագրված է Թավրիզից ուղարկված մի գրախոսական՝ «Մի պարսկերեն բրոշյուր» վերնագրով։ Ելնելով գրախոսականի ոգուց, պետք է ենթադրել, որ այն պատկանում է Բաֆֆու գրչին։ Հայտնի է, որ անցյալ դարի 70—80-ական թվականներին Պարսկաստանը ֆեոդալական հետամուսցություն ու խավարի մեջ խարխալող մի պետություն էր։ Եվ ահա գրախոսը քննադատում է Պարսկաստանի մասին բրոշյուր գրող հեղինակին այն բանի համար, որ նա չի խոսում այն միջոցների՝ լուսավորության ու դպրոցների մասին, որոնց մեջ պետք է տեսնել այդ երկրի փրկությունը։

Ուշագրավ է այն, որ «Մշակի» 1875 թ. № 33-ում Մել. ստորագրությամբ «Նամակ Սալմաստից» ակնարկում Բաֆֆին նույն միտքն է արտահայտում։ Նկատի ունենալով Պարսկաստանի ժողովրդի հետամուսցությունն ու ծալրահեղ մոլեռանդությունը՝ Բաֆֆին գրում է, որ «ժողովրդի մեջ դարերով թանձրացած խավար նախապաշարմունքը... փարատելու համար պետք է հիմնավոր ուսում և կրթություն— այդ պակաս է Պարսկաստանին»։

Որ Անանունը Բաֆֆին է, հիմնավորվում է նաև մի շարք այլ փաստերով։ Թավրիզ գնալուց հետո մինչև վերելում հիշատակված հոդվածը Բաֆֆին «Մշակում» տպագրել էր (1875 թ. համարներում «Նամակ Դավրեթից», իսկ 1876 թ. համարներում՝ «Նամակ Պարսկաստանից» ընդհանուր խորագրով) մի շարք հոդվածներ (նամակներ) Մելիքզադե՝ կեղծանունով։ 1876 թ. № 21-ի նամակում շարագրելով տարրեր սեռի և դավանանքի պատկանող երկու երիտասարդների դժբախտ սիրո պատմությունը, Բաֆֆին քննադատում է այդ գործում մեծ դեր խաղացած մուլաներին և ժողովրդի ֆանատիկոսության հասնող մոլեռանդությունը։

Հաջորդ նամակը (1876 թ., № 29), ուր նորից է խոսվում մուլաների մոլեռանդության մասին և այս առումով նախորդի օրգանական շարունակություն է հանդիսանում, արդեն ստորագրված է Աճաճուն։ Երա պատճառը, ըստ երևույթին, այն է, որ այժմ Բաֆֆին չի բավարարվում միայն մուլաների կրոնամոլության և դրանից բխող հետևանքների քննությամբ, այլ ավելի առաջ պնդելով՝ մերկացնող քննադատության է ենթարկում պարսկական

կրոնի լայն տարածում ստացած սովորույթները՝ անվանելով դրանք «խալտառակութուն», «խաբեական երևույթներ», միաժամանակ հանդես գալով կառավարությանը խրատողի դերում:

Հետաքրքիրն այն է, որ հաջորդ նամակը (№ 30), ուր հարցերը չեն դրված այնպիսի սրությամբ, ինչպես նախորդում, ստորագրված է Մել., մինչդեռ սրան հաջորդող երկու նամակներից առաջինը (№ 33) անստորագիր է, իսկ երկրորդը (№ 35), որը միաժամանակ, Րաֆֆու վերջին նամակն է Պարսկաստանից, ստորագրված է Անաճուն:

Նախավերջին նամակը (№ 33) անստորագիր է, որովհետև Րաֆֆին անվանապես հիշատակում է Պարսկաստանի երկու զավառների խաներին և պատմում հայերի նկատմամբ նրանց կիրառած անմարդկային պատիժների մասին, համարձակորեն մերկացնելով նրանց և չխուսափելով անվանել այդպիսիներին «ավազակներ» և «բռնակալներ»... Հոգևածագիրը ամենայն համարձակությամբ իր քննադատական խոսքն ուղղում է նաև կառավարության հասցեին: Իսկ թե ինչու սրանից հետո Անաճուն է ստորագրում, քացատրվում է, հավանաբար, նրանով, որ այդ հոգևածը, իբրև պարսկական կրոնի կողմից սրբազործվող հրաշքների սուր քննադատություն, կարծես, նույն կեղծանվամբ ստորագրված հոգևածի շարունակությունն է կազմում:

Անստորագիր, Անանուն և Մել. ստորագրությամբ հոգևածների լեզուն, գրելաձևը, ոճական որոշ առանձնահատկություններ ակնհայտ կերպով ցույց են տալիս, որ այդ հոգևածները միևնույն անձնավորության գրչին են պատկանում:

«Մշակում» նրա հրատարակության առաջին տարիներին և տարբեր ժամանակներում լույս էին տեսնում Թավրիզից ուղարկված հոգևածներ, բայց Րաֆֆու Պարսկաստան մեկնելուց հետո տպագրվում էին միայն նրա նամակները, եթե հաշվի չառնենք Ռաշտ քաղաքի դեպքերի կապակցությամբ մի փոքրիկ երկու նամակները, որոնք նյութի շարադրման և լեզվա-ոճական առանձնահատկություններով ակնհայտ կերպով տարբերվում են Մելիքզադեի նամակներից: Մինչդեռ անստորագիր, Անանուն և Մելիքզադե ստորագրությամբ հոգևածների ընթերցումը ոչ մի կասկածի տեղ չի թողնում, որ դրանց հեղինակը միևնույն անձնավորությունն է, այն էլ Րաֆֆին:

Ուշադրության արժանի մի հանգամանք. 1876 թ. վերջերին և 1877 թ. սկզբներին Րաֆֆու զաղափարական հակառակորդները թարգմանում են «Մշակում» տպագրված նրա նամակները ու «Հարեմ» վիպակը և ներկայացնում թաղաժառանգին: Վիպասանի կյանքին վտանգ է սպառնում: Նման պայմաններում նա դադարեցնում է Մել. ստորագրությամբ նամակների տպագրությունը «Մշակում»: Հետաքրքիրն այն է, որ նույն ժամանակամիջոցում գրելուց դադարում է նաև Անաճուն:

Այն հանգամանքը, որ նամակների մի մասը տպագրված են Անաճուն, իսկ մյուսները՝ անստորագիր են, հիմք է տալիս կասկածելու, որ այդ կատարում էր ոչ թե Րաֆֆին ինքը, այլ խմբագրությունը՝ աչքի առաջ ունենալով իր աշխատակցի անվտանգությունը: Վերևում շարադրվածը իրավունք է տալիս ասելու, որ Անաճունը Հակոբ Մելիք-Հակոբյանի կեղծանուններից մեկն է: